կակից Սահակ Զորափորեցուն, ինչպէս վերագրում է սրան շարականների հեղինակների ցանկը(1). սակայն մեզ պակասում են միանգամայն դրական ցուցումներ այդ մասին։ Ընդհակառակ՝ շարականի բովանդակութիւնը և ուրիշ տուեալներ թելադրում են ոչ միայն հեղինակ ընդունել Գրիգոր Մագիստրոսին, այլ և ստացող Հաւուց Թառի այն Ամենափրկիչ սրբութեան, որ համարւում է նոյն՝ Աշոտ պատրկի վերոյիշեալ պատկերի հետ, և այժմ պահւում է Ս. Էջմիածնում։

Բ.

Յայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսը չինել է Հաւուց Թառի Ամենափրկիչ կոչուած եկեղեցին. մատենագրական հնագոյն տեղեկութիւնը տալիս է Վանական, որ շատ քիչ արձագանգ է գտել յետագայում, մինչև որ 1721 թուին, երբ Աստուածատուր կաթողիկոսը սկսել էր մի նոր եկեղեցի շինել, երևան եկաւ հին շինութեան հետեւեալ արձանագրութիւնը.

«Թուին ՆԿԲ. ի թագաւորութեանն Պագկայ եւ ի հայրապետութեանն տեառն Սարգսի ես Գրիգոր մագիստրոս վերըստին շինեցի զեկեղեցիս յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց. նա և ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն որ ի սմա, քառադէմք չորս անկեամբ յաջամբ և ահեկամբ ի դիմաց և ի թիկանց. և տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհակալ թագաւորի թղթովն եւ կայսերական կնքովն. հաստատեցաք ձեռագրով և հայրապետական նամակաւն. և ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս՝ որ է Հայոց Թառ, հանգստարան եւ աւթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի որ ի փայտին, խնդրելին Յովհաննու աւետարանչին, հրամանաւ մաւր տեառն մերոյ սուրբ Աստուածածնին. եւ նորոգեալ հաստատեցաք վերստին զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն. Աստ եդաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ. Գրիգոր Վահրամ պատանին» (պիտանին. Զամբ. եւ Շահխ.)(1)։

Մենք չենք ուզում այստեղ զբաղուել արձանագրութեան գիւտի և բնագրին վերաբերեալ խնդիրներով. մեզ համար էականը ընդհանուր բովանդակութիւնն է, որ կեղծիք համարելու ոչ մի հիմք չունինք, թէև բնագրի և հնագրական ձևերի ճշգրտութիւնը պահուած չէ. առաջին արտագրող քուրդ Յոհաննէսը հասկացողութիւն չունէր կրճատումների կամ ուղղագրութեան ճիշդ պահպանութեան կարևորութեան մասին։ Արձանագրութեան վաւերականութեան մի արտաքին ապացոյց կարող է ծառայել եւ այն հանգամանքը, որ Պռոշ իշխանի մեծ արձանագրութիւնը Գեղարդի վանքում 1283 թուի, ազգուած է սորանից և առնչութիւն է նկատւում երկուսի մէջ, որ հասկնալի է, երկու վանքերի խիստ մերձաւորութեան պատճառով(2)։ Մանաւանդ է արձանագրութեան նաև, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ, Մանուէլ Բջնեցին, որ ապրում էր ԺԴ. դարու կէսերին։

Ա՞րդ, ո՞վ է այստեղ յիշուած Գրիգոր Մագիստրոսը։ Մեր մէջ յայտնի են այդ անունով և իրար ժամանակակից երկու անձնաւորութիւն. երկուսն էլ Պահլաւունի։ Մէկը յայտնի մատենագիրն է, Վասակ Հոլումի որդին, նաև Բջնեցի կոչուած. միւսը Կեչառիսի Լուսաւորչի դրան արձանագրութեան Գրիգոր Մագիստրոսը, որդի Հասանայ, որ չինել է Կեչառիսի եկեղեցին, դարձեալ «ի թագաւորութեան Գագկա և ի հայրապետութեան տեն Սարգսի». եւ նոյն

(1) Շարական. Էջմիածին. 1861. եր. Բ. «Գրիգոր Մագիստրոսն զՁորս ըստ պատկերին (գրեաց, երգեաց), զոր այլք Իսահակայ Զորափորեցւոյ տան»։ Ձեռագիրների մէջ կան այս ցանկի օրինակներ, փոքր ինչ տարբեր իրարից։

(1) Զամբռ. Սիմէոն կաթուղիկոսի 276։ Շահխ. Բ. 293։ Ալիշան. Այրարատ. 354։

(2) Նոյնատիպ արձանագրութիւնը տ. մեր Խաղբակեանք կամ Պռոշեանք. Վաղարշ. 1928. պատկ. 30 եւ եր. 102։